



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Պ Ե Տ

«23» դեկտեմբերի 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

Մ. Անանյան

ԳԲԽ-47/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մաժէվ» ՍՊԸ-ի 09.12.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Մաժէվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Մաժէվ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 09.12.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար շրջանակային համաձայնագրով «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրի շրջանակներում «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն մասնակցել է քիմիական նյութերի գնման ընթացակարգին:

Նույն ընթացակարգի շրջանակներում հրավերի որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը բաժնի 2.3. կետի «Մասնագիտական փորձառություն»

չափանիշի գնահատման մասի 1-ին ենթակետով սահմանված է «Նմանատիպ են համարվում քիմիական նյութերի կամ լաբորատոր պարագաների մատակարարումը:»

Ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը հայտարարված հրավերի 11-րդ չափաբաժնի (ԴՆԹ/ՌՆԹ Էքստրակցիայի հավաքածու) մասով ճանաչվել է ամենացածր գնային առաջարկ ներկայացրած ընկերություն:

Ընթացակարգի շրջանակներում հրավերով նախատեսված կարգով, Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման շրջանակներում, որպես նմանատիպ մատակարարման գործարք, ներկայացրել է ներքոհիշյալ ընթացակարգերի շրջանակներում մատակարարման պայմանագրերը, Հանձնման-ընդունման ակտերը և հաշիվ ապրանքագրերը:

Մասնավորապես՝ 2015թ-ին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ՊՆ կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/35 և ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-23/8 հրավերների շրջանակներում «ՄԱԺԷՎ» ՍՊ-ի հետ կնքվել են «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման N ՇՀԱՊՁԲ-7/35-1» և «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման N ՇՀԱՊՁԲ-23/8-2» պայմանագրերը, որոնց համաձայն Ընկերության կողմից մատակարարվել են 16 976 700 ՀՀ դրամ արժողությամբ, տարբեր լաբորատոր պարագաներ՝ նավթամթերքներում ծծմբի մասնաբաժնի որոշման համար նախատեսված սարքավորում Սպեկտրոսկան-Ս, վառելիքում փաստացի խեժի որոշման համար նախատեսված սարքավորում ՊՕՍ-Վ, նավթամթերքի խտության չափման Արեոմետրներ և քիմիական նյութեր՝ վառելիքում ջրի մակարդակը որոշելու համար նախատեսված ջրազգայուն հեղուկ՝ «Պաստա Վլադիկինա», հատուկ նշանակության ավիացիոն հերմետիկներ «Ու 30» և «ՎԻՏԷՖ – 1»:

Սակայն Հանձնաժողովը նոյեմբերի 16-ի գրությամբ տեղեկացրել է, որ. «... ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22 ծածկագրով մրցույթին Ձեր ներկայացրած պայմանագրերը չեն համարվում համարժեք արձանագրվել է թերություն՝ կապված գնման պայմանագրի համանմանության հետ: Առաջարկում ենք մեկօրյա ժամկետում շտկել թերությունը:»

Ի պատասխան նոյեմբերի 16-ի գրության՝ Ընկերությունը պատշաճ կերպով ներկայացրել է գրավոր պարզաբանում, որը հրապարակել է նաև նոյեմբերի 17-ին տեղի

ունեցած Հանձնաժողովի նիստում, սակայն Հանձնաժողովը ոչ միայն չի ընդունել այն, այլ ավելին՝ սուբյեկտիվ մեկնաբանություններով, նոյեմբերի 17-ի թիվ 5 արձանագրությամբ որոշել է՝ կասեցնելով գնման ընթացակարգը՝ Ընկերության կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման շրջանակներում պայմանագրերի և փաստաթղթերի նմանատիպ լինելու մասով պարզաբանման պահանջով դիմել պետական մարմիններին: Այնուհետև, վերջիններիս կողմից պատասխան ստանալուց հետո 2015թ. դեկտեմբերի 4-ի թիվ 6 արձանագրությամբ կրկին անգամ որոշում է կայացրել կասեցնել ընթացակարգը և կրկին անգամ պահանջել պարզաբանում՝ պատճառաբանելով որ «Պետական մարմիններից ստացված պարզաբանումները գնահատող հանձնաժողովին հնարավորություն չեն տալիս վերջնական որոշում կայացնելու, ինչի հետևանքով գնահատող հանձնաժողով որոշել է լրացուցիչ պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով նիստի կասեցման ժամկետը երկարաձգել մինչև տվյալ պարզաբանման ստացումը:

Նման պայմաններում առավել, քան անհասկանալի է Հանձնաժողովի դիրքորոշումը, քանի որ վերջինս ակնհայտորեն հակասում է 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն ՀՀ կառավարության որոշման 69-րդ կետին:

«Մաժէվ» ՍՊԸ-ն, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 69-րդ կետը, նշել է, որ Հանձնաժողովի կողմից ակնհայտ և կոպիտ ձևով խախտվել են ՀՀ օրենսդրության պահանջները, վերջինիս գործողություններն ակնհայտ ոչ իրավաչափ են և չեն բխում գործող օրենսդրության պահանջներից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Մաժէվ» ՍՊԸ-ն խնդրել է՝

1. դադարեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2015թ. թիվ 6-րդ արձանագրությամբ կայացրած որոշումը.

2. «Մաժէվ» ՍՊԸ-ին նույն ընթացակարգի 11-րդ չափաբաժնի մասով ճանաչել հաղթող:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 15.12.2015թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-47/15 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Մաժէվ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հայտնել են, որ հանձնաժողովի որոշումը հակասում է 10

փետրվարի 2011 թվականի N 168-Ն ՀՀ կառավարության որոշման 69-րդ կետին և խնդրել են դադարեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2015թ. թիվ 6-րդ արձանագրությամբ կայացրած որոշումը, «Մաժէվ» ՍՊԸ-ին նույն ընթացակարգի 11-րդ չափաբաժնի մասով ճանաչել հաղթող:

2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.12.2015թ. թիվ ԱԿ/06.1/14494-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով հայտարարված մրցույթի շրջանակներում «Մաժէվ» ՍՊԸ-ին հրավերի պահանջներին համապատասխան պահանջվել է ներկայացնել նմանատիպ ապրանքների մատակարարումն հավաստող պայմանագրեր: Ներկայացված պայմանագրերով «Ավիացիոն հերմետիկ – 1 620 000 ՀՀ դրամ», «Ջրազգայուն մածուկ – 1 123 200 ՀՀ դրամ» մատակարարումները ընդհանուր 2 743 200 ՀՀ դրամ ծավալով հանձնաժողովի կողմից եղել են ընդունելի որպես նմանատիպ մատակարարումներ՝ դիտարկելով դրանք որպես քիմիական նյութեր: Պայմանագրով նախատեսված «Արեոմետր», «Ծծմբի քանակի որոշման սարք», «Թերմոկայունացնող սարքավորում» ապրանքատեսակները հանձնաժողովի կողմից դիտարկվել են ոչ որպես քիմիական նյութ և ոչ էլ որպես լաբորատոր պարագա, ինչի կապակցությամբ կազմակերպությանն առաջարկվել է ներկայացնել այլ պայմանագրեր: Արդյունքում կազմակերպության կողմից ներկայացվել են գրավոր և բանավոր հիմնավորումներ առ այն, որ վերոգրյալ ապրանքները հանդիսանում են լաբորատոր պարագաներ, չնայած այն հանգամանքին, որ դրանց տեխնիկական բնութագրում և անվանման մեջ նշված է «սարք» անվանումը: Հաշվի առնելով նշվածը՝ հանձնաժողովը որոշել է ՀՀ առողջապահության նախարարության անունից դիմել համապատասխան պետական մարմիններին՝ հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանում ստանալու նպատակով, մասնավորապես ՀՀ ֆինանսների և ՀՀ Էկոնոմիկայի նախարարություններ: Ստացված պատասխանների մեջ չի եղել հարցադրման վերաբերյալ ուղղակի պատասխան, այդ իսկ պատճառով որոշում է կայացվել դիմել «Ստանդարտների ազգային ինստիտուտ»

ՓԲԸ, որտեղից դեռևս պատասխան չի ստացվել: Ակնկալվում է պատասխանն ստանալուն պես ամփոփել գնահատման գործընթացը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 15.12.2015թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-47/15 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչները հայտնել են, որ անհիմն են համարում «Մաժէվ» ՍՊԸ-ի 09.12.2015թ. ներկայացրած բողոքը:

Պատվիրատուի ներկայացուցիչները պարզաբանել են, որ, իրենց կարծիքով, «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերում ընդգրկված ապրանքատեսակները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի նրանք հարցում են արել լիազոր պետական մարմիններից: Վերջիններց սակայն ստացել են պատասխան, որ նշված հարցի պարզաբանումն իրենց լիազորությունների շրջանակից դուրս է, ուստի կրկին հարցում են արել համապատասխան լիազոր մարմնի և սպասում են պատասխանի:

Հանձնաժողովի անդամների այն հարցին, թե արդյոք նշված ապրանքների համանմանության գնահատումը հենց իրենց՝ Պատվիրատուի գործառույթը չէ, ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչները պատասխանեցին, որ ներկայացված ապրանքներն, իրենց կարծիքով, համանման չեն, սակայն սխալ որոշում չկայացնելու համար դիմել են համապատասխան լիազոր մարմինների՝ հստակ պատասխան ստանալու համար:

3. ԳԲԽ-47/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-47/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մաժէվ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում Հայաստանի հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերումը:

3. Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2.3 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական փորձառություն,
- 2) տեխնիկական միջոցներ,
- 3) ֆինանսական միջոցներ,
- 4) աշխատանքային ռեսուրսներ:

«Մասնագիտական փորձառության» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում քիմիական նյութերի կամ լաբորատոր պարագաների մատակարարումը:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

4. «Մաժէվ» ՍՊԸ-ն, որպես նախկինում կատարված համանման պայմանագրեր, ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաժէվ» ՍՊԸ-ի միջև 29.04.2015թ. և 04.05.2015թ. կնքված համապատասխանաբար՝ «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման թիվ ՇՀԱՊՁԲ-23/8-2» և «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման թիվ ՇՀԱՊՁԲ-7/35-1» պայմանագրերը, որոնց հավելվածների համաձայն՝ Ընկերության կողմից մատակարարվել են՝ ավիացիոն հերմետիկներ «Ու 30» և «ՎԻՏԷՖ-1», Արեոմետրներ 0.650-0.750, 0.750-0.830, 0.830-0.909, ջրազգայուն մածուկ, ծծմբի քանակի որոշման սարք Սպեկտրոսկան-Ս, թերմոկայունացնող սարքավորում ՊՕՍ-Վ:

5. ՀՀ ֆինանսների նախարարությունն, ի պատասխան Պատվիրատուի 18.11.2015թ. թիվ ԱԿ/06.1/13343-15 գրության, հայտնել է, որ նշված ապրանքատեսակների՝ քիմիական նյութեր կամ լաբորատոր պարագաներ հանդիսանալու կամ չհանդիսանալու վերաբերյալ հարցի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիրքորոշում ներկայացնել չի կարող, քանի որ բարձրացված հարցը դուրս է ՀՀ ֆինանսների նախարարության իրավասությունների շրջանակներից:

ՀՀ առողջապահության նախարարության նշված հարցմանը նույնաբովանդակ պատասխան է ներկայացրել նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը:

6. ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն իր 14.12.2015թ. թիվ ԵԱ-631 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ. «...համաձայն «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «չափում կատարելու համար նախատեսված սարքը, որը կարող է կիրառվել առանձին կամ լրացուցիչ սարքերի հետ համատեղ» համարվում է չափման միջոց: Դատելով գրությանը կից տեխնիկական բնութագրում բերված նկարագրություններից և դրանում վկայակոչված ստանդարտներից՝ «արեոմետրերը» «ծծմբի քանակի որոշման սարքը (Սպեկտրոսկան-Ս)» և «թերմոկայունացնող սարքավորում ՊՕՍ-Վ» համարվում են չափման միջոցներ, այսինքն չափում կատարելու համար նախատեսված սարքեր: Մինչդեռ, լաբորատոր պարագաները և քիմիական նյութերը չափման միջոցներ չեն հանդիսանում: ...»:

7. ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն իր 23.12.2015թ. թիվ ԵԱ-651 գրությամբ «Մաժէվ» ՍՊԸ-ին հայտնել է, որ. «...համաձայն «Հափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «չափում կատարելու համար նախատեսված սարքը, որը կարող է կիրառվել առանձին կամ լրացուցիչ սարքերի հետ համատեղ», համարվում է չափման միջոց: Ձեր կողմից մատնանշված սարքավորումները համարվում են չափման միջոցներ, այսինքն չափում կատարելու համար նախատեսված սարքեր, որոնք կարող են օգտագործվել լաբորատորիաներում և համարվել լաբորատոր սարքավորումներ:...»:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով գնման ընթացակարգի 11-րդ չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մաժէվ» ՍՊԸ-ն:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.11.2015թ. ժամը 17:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն. «...Որոշվեց գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել մինչև «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերում ընդգրկված ապրանքատեսակների հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ պարզաբանման ստացումը լիազոր պետական մարմիններից:»:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն. «...Պետական մարմիններից ստացված պարզաբանումները գնահատող հանձնաժողովին հնարավորություն չեն տալիս վերջնական որոշում կայացնելու: Ինչի հետևանքով գնահատող հանձնաժողովը որոշեց լրացուցիչ պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով նիստի կասեցման ժամկետը երկարաձգել մինչև տվյալ պարզաբանման ստացումը:»:

4. ԳԲԽ-47/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Մաժէվ» ՍՊԸ-ի 09.12.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը, «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝

«Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում»:

Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է մինչև ինն անդամից կազմված գնահատող հանձնաժողով, որը՝

- 1) հաստատում է հայտարարության և հրավերի տեքստերը.
- 2) փոփոխություններ է կատարում հրավերում.
- 3) պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ.
- 4) բացում և գնահատում է հայտերը.
- 5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):»:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):»:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախատրակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության

տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: ***Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:***

Վերլուծելով նշված իրավանորմերը և փաստական հանգամանքները՝ Կենտրոնը գտնում է, որ հայտերը, ինչպես նաև մասնակցի «Մասնագիտական փորձառության» չափանիշը գնահատելը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն, հանդիսանում են գնահատող հանձնաժողովի պարտականությունը, և նշված հարցի պարզաբանման նպատակով պետական մարմիններին դիմելու համար նիստը երկու անգամ՝ (17.11.2015թ.) և (04.12.2015թ.) կասեցնելով, գնահատող հանձնաժողովը չի պահպանել գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված նորմերը:

Կենտրոնն արձանագրում է նաև, որ տվյալ հարցի կապակցությամբ նույնաբովանդակ կարծիք են հայտնել նաև ՀՀ ֆինանսների նախարարությունը և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ Պատվիրատուին հայտնելով, որ նշված հարցը լուծումը դուրս է իրենց իրավասությունների շրջանակներից:

Բացի այդ, գնահատող հանձնաժողովը պայմանագրերի համանմանությունը գնահատելիս՝ կարող էր ղեկավարվել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 69-րդ կետով, համաձայն որի՝ Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը ***մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ Ընկերության՝ «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊԶԲ-15/15-2015/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2015թ. թիվ 6-րդ արձանագրությամբ նիստի կասեցման ժամկետը երկարացնելու մասին որոշումը դադարեցնելու պահանջը ենթակա է բավարարման:

Անդրադառնալով բողոքի՝ «Մաժէվ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 11-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու պահանջին՝ Կենտրոնն արձանագրում է, որ գնումների

բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման լիազորությամբ օժտված չէ, ուստի, գտնում ենք, որ այս մասով բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Մաժէվ» ՍՊԸ-ի 09.12.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

1. Դադարեցնել «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2015թ. թիվ 6-րդ արձանագրությամբ նիստի կասեցման ժամկետը երկարացնելու մասին որոշումը:

2. «Մաժէվ» ՍՊԸ-ին «ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/15-2015/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 11-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու մասին պահանջը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-47/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Դավթյան